Իսկ այլոց հնգից վերջին է որ յարտօնութէ է սահման . որ ասեն թե՛ իմաստասիրութիւն է արհեստ արհեստից և մտկացութի մտկացուեց :

Իսկ այլոց չորից սահմանացն՝ առաջինք են որք յենթակայէ, և վերջինք որք ՚ի կատարմանէ : Ի՞նչ երկարանչելոց այսոցիկ, որ ՚ի հուսկ ենթակայէ է՝ առաջին է . և վերջին որ ՚ի հեռի ենթակայէ :

Նոյնպէս և որք ՚ի կատարմանէ են, առաջին է որ ՚ի հուսկ կատարմանէն է . և վերջին որ ՚ի հեռի կատարմանէ :

Արոց կարգաւորութիւնն է այսպէս և ըստ այսմ օրինակի :

Առաջին սահման իմաստասիրութեան որ ՚ի հուսկ ենթակայէն՝ է այն որ ասեն թե՛ իմաստասիրութիւնէ գիտութիւն էակայն ըստ որում

բում էակն էն : Իրկրորդ սահման 'ի հեռի  
են թակայէն է որ ստէ եթէ՛ իմաստասիրութե  
դիտութիւն անձայնայ և մարդկայնայ իրողուց :  
Իջրորդ սահման իմաստասիրութեան 'ի հուս  
կատարմանէ որ ստեն, իմաստասիրութիւնէ  
խալումն մահու :

Չորրորդ սահման 'ի հեռի կատարմանէն որ  
ստէ, իմաստասիրութիւնէ նմանութիւնայ ըստ  
կարողութեան :մարդկան :

Հինգերորդ սահման որ յարտօնութենէ որ  
ստեն, իմաստասիրութիւնէ արհեստ արհեստ  
սից և մակայ՝ մակայու՝ :

Վեցերորդ սահման իմաստասիրութեան 'ի  
ստուգաբանութենէ է որ ստեն, եթէ իմաստ  
ասիրութիւնէ սիրելութիւն իմաստութե :

Չայս ստելով՝ եկեցուք և ասացուք զպատ  
ճառս կարգաւորութեան սահմանայ իմաստա  
սիրութեան :

**Ե**ւ պարտէ գիտել, եթէ սահման իմաստա  
սիրութեան որ 'ի ստուգաբանութենէ որ ս  
տեն եթէ՛ իմաստասիրութիւնէ սիրելութիւն  
իմաստութեան, վերջին կարգաւորութեան  
հանդիպեցաւ և յիրաւի :

Ստան զն ամ իրի նախ պարտէ գոյանալ և ապա  
անունն հանդիպիլ : Արգոն՝ նախ ծնանի և  
ապա 'ի վերջոյ զնի անունն :

Կոյնպէս պարտէ նախ և առաջին գոյանալ իմաս  
տասիրութեան, և ապա անունն հանդիպիլ և  
կոչել

կոչել իմաստասիրութիւն :

Արդ՝ վասն զի անուն զվե րջին դասումն բնաւ որեցաւ ունիլ, վասն այտորիկ և որ ՚ի ստագաբանութենէ սահմանն է՝ զվե րջին դասն ընկալաւ որպէս զանուն իմաստասիրութեան :

Իսկ որ յարտնութենէ սահմանն որ ստէ թէ՛ իմաստասիրութիւն է արհեստ արհեստից և մակացութի մակացութեանց . ՚ի վե րջոյ այլոցն դասեցաւ վասն այսր պատճառաց :

Ամենայն իր որ առ հասարակ է՝ նախագաստ յառաջ քան զյատուկն որ յատկապէս ումեք գոյանայ :

Ո՛րքան, կենդանին առ հասարակ իր գոլով՝ նախագաստ բանականին և մահկանացութիւն . վասն զի ՚ի յոլովս է կենդանին քան զբանականն և զմահկանացուն :

Ի՞նչ դարձեալ բանականն և մահկանացուն նախագաստն մտաց և մակացութեան ընդունակին . վասն զի բանականն և մահկանացուն ՚ի յոլովագոյնս են քան զմտաց և մակացութեան ընդունակն : Վասն զի մտաց և մակացութեան ընդունակն մարդոյն միայն է յատուկ :

Արդ՝ այսպէս առ հասարակագոյնքն նախագաստն այնոցիկ որք յատկապէս գոյանան ումեք :

Արդ՝ վասն զի առ հասարակագոյնքն նախաստին այնոցիկ որ յատկապէս գոյանան ումեք, վասն այնորիկ և այնոքիկ սահմանք որ յենթակայէ են և ՚ի կոտարմանէ՝ նախագաստն յարտնութեանէ

Թե՛նէ սահմանին : Վասն զի ենթակայ և կատարումն՝ և այլոց արհեստից և մակացուծեանց գոյանայ :

Իսկ արտօնութիւնն ո՛չ ումեք պատշաճի , բայց միայն իմաստասիրութեան . քանզի իմաստասիրութիւն միայնէ գերազանցեալ :

Ի՞նչ վասն այտորիկ որ յարտօնութե՛նէ սահմանն է՝ ՚ի վերջէ դասեալէ . զի յատկապէս իմաստասիրութեան միայն պատշաճի :

Իսկ որք յենթակայէ սահմանք են՝ առաջինք են քան զայնա որք ՚ի կատարմանէն . վասն զի նախ ենթակայն գոյանայ և ապա կատարումն : Չի եթէ ոչ ենթակայի հիւսնութեան նախ փայտն , ոչ կորէ հիւսն առնել աթու որէ կատարումն :

Դարձեալ՝ որ ՚ի հուպ ենթակայէն է սահմանն՝ նախադասի այնմ որ ՚ի հեռի ենթակայէն է . վասն զի ընդհանուրն մասնականին գոյ նախադասեալ :

Չի եթէ ոչ գոյր ընդհանուր փայտն , և ոչ մասնականն կարէր գոլ . այսինքն ընկուզի կամ տօսախի :

Ըստ նմին օրինակի նախադասի սահմանն որ ՚ի հուպ ենթակայէ է որ ասէ , իմաստասիրութի է գիտութիւն էակայն ըստ որում էակքն են : Ի՞նչ ապա երկրորդ սահմանն նախադասի որ ՚ի հեռի ենթակայէն է որ ասէ , իմաստասիրութիւն է գիտութիւն Թճայնոց և մարդկայնոց

իրորութեանց : Ատան զի ընդհանուր էակքն  
 նախարդասին մասնականում գոյացու թեան :  
 Կմանապէս յետ սյտորիկ նախարդասի սահմանն  
 որ 'ի հուպ կատարմանէ որ ասէ, իմաստասիրութեանէ  
 խոկումն մահու :

Ի՞նչ յետ սորա 'ի հեռի կատարմանէն որ ասէ  
 եթէ իմաստասիրութեանէ նմանութիւն ար  
 ըստ կարողութեան մարդկան :

Ատան զի խոկումն մահու առաջագոյն է քան  
 զնմանիլն ար :

Չի եթէ ոչ նախ խոկացէ զմահ և մեռելութեան  
 թաղակատարեցէ ախտից, ոչ կարէ նմանիլ  
 ար :

Չսյտասիկ և չերրորդ գլուխն :

Սկեպուք և յիննէրորդ գլուխն և ասացուք  
 եթէ ոչք են գտողք սահմանացս սյտոյիկ :  
 Ի՞նչ պարտէ գիտել եթէ երկուց սահմանացդ  
 որք յենթակայէն են և մից որ 'ի ստուգաբան  
 նութեանէ՝ զպիթագորաս ասեն գտող . թէ  
 պետ և ոչ կարեմք ցուցանել 'ի պիթագորայ  
 շարագրութեանց :

Քանզի ոչ կանեցա՞ն պիթագորաս թողուլ շարս  
 գրածութիւնս ասելով թէ ոչ կամիմ զեմ վար  
 դապետութիւնս թողուլ յաշխարհ յանշունչս,  
 այլ 'ի շնչա՞նորս : Անշունչս կոչեաց զբիրս .  
 իսկ շնչա՞նորս՝ զաշակերտան :

Արք եթէ դք հարցանիցէ կամ տարակուսեցի,  
 կարողք գնն պատասխանատրել և լուծանել :

Իսկ գիրք միշտ զմի և զնոյն ասելով՝ ոչ կարեն  
լուծանել արտաքոյ իւրեանց տարակուսանս :  
Աորդ՝ որպէս ասացաք՝ ՚ի պիթագորայ շարա-  
դրութեանց ոչ կարեմք ցուցանել, բայց ՚ի  
պիթագորականացն ցուցանեմք :

Քանզի նիկիմաքոս պիթագորական որ զթոճա  
կանութեան տեսականն եգիտ, ասէր թէ՛ պի  
թագորոսս մյսպէս սահմանեաց զիմաստասիրու-  
թիւն, եթէ՛ իմաստասիրութիւնէ գիտութե  
էակաց ըստորու՞ էակք են :

Ի՞նչ դարձեալ թէ՛ իմաստասիրութիւնէ գի-  
տութիւն Թճայնոց և մարդկայնոց իրողութեց :  
Ի՞նչ դարձեալ, իմաստասիրութիւնէ սիրելու-  
թիւն իմաստութեան :

Իսկ ք սահմանքն վերաբերին ՚ի պղատոն որք  
՚ի կատարմանէ են : Այն որ ասեն թէ, իմաս-  
տասիրութիւնէ խոկումն մահու :

Ի՞նչ որ ասեն թէ, իմաստասիրութիւնէ նմա-  
նութիւն այ ըստ կարողութեան մարդկան :  
Քանզի ՚ի փեստրոնի տրամաբանութեանն ե-  
րևի պղատոն ասել զիմաստասիրութիւն խո-  
կումն մահու :

Արովք սսէ տազնապին որք միանգամ հանդի-  
պին ուղորդաբար մեքձեցեալ յիմաստասիրու-  
թիւն մուսնալով զնորունս իսկ զինքեանս և  
զայլն • ոչ այլ ինչ փոխիլ, քան թէ զմեռա-  
նիլն և զմահանալն : Իսկ ՚ի թէ ետի տրամա-  
բանութեանն երևի ասել զիմաստասիրութե  
առ

առ ո՞ն թէ ոգորոս երկրաչափ եթէ՛ նմանու թէ  
 Կ, ըստ կարողութեան մարդկան :

Յորոյ ձեռն և սակ՝ թէ որովհետև ով թէ ոգորոս  
 ոչ գոյ կարողութիւն կորուսանել զչարն,  
 քանզի հարկէ ամենայն իրօք ընդ դէմ հակա  
 ռակ ինչ գոյ և ոչ ՚ի վերնագոյնսն զետեղել :

Բայց զայսր մահկանացու բնութեամբ և զայսր  
 տեղեօք պարագրիլ հարկէ :

Ասանորոյ պարտէ փախչել աստուտ անդր զվա  
 ղագոյնսն :

Ի՞նչ զն՛նչ արդեօք իցէ փախուստն • նմանութի  
 Կ, ըստ կարողութեան մարդկան :

Նմանութիւն Կ, է բարեպաշտն և արդարն գոյ  
 խոհեմութեամբ : Իսկ որ յարստութեանէ  
 սահմաննէ՛ վերաբերի յարխտոտէլ :

Քանզի այնպէս երևի զեմաստասիրութիւն սահ  
 մանել յետ առայելոց բանականաց եթէ՛ իմաս  
 տասիրութիւն է արհեստ արհեստից և մակա  
 ցութիւն մակացութեանց :

Չայտսիկ իննե բորդ գլուխն :

Հանդերձ ՝ ի և Առաջիկայ :

Պրոհ 7 :



Մտեալք եթէ քանի՞ք և ո՞րպիսիք ե՞ն  
 սահմանք իմաստասիրութեան, և պատ  
 ճառս քանիւթեանսն և զկարդաճորութի  
 Ե

և զգտօղս նոցա : Ի կեցոյւք և հաստատե սոցւք  
զմի մի 'ի նոցանէ 'ի մէջ ածե լով :

Որոց առաջինն սահմանն էր 'ի նոցանէ որ ասէր՝  
[Թէ իմաստասիրութիւնն է գիտութիւնն էա-  
կացն ըստ որում էակք են :

Ի՞նչ պարտէ գիտել եթէ փոխանակ սեռի ա-  
ռեալ է գիտութիւնն որպէս հաստարակ ինչ :

Իսկ՝ էակացն՝ փոխանակ բաղկացուցիչ զանա-  
զանութեանց • որք որոշեն գեներատասիրութիւն  
յաղոց արհեստից • քանզի իմաստասիրութիւն  
ամենայն գոյիցէ գիտութիւնն • իսկ այլ ար-  
հեստք ն մակացութիւնք ոչ ամենայն գոյիցն •  
այլ մասնականաց ոմանց :

Ի՞նչ ատրոսկոսին ոմանք եթէ՝ վասնէր ասա-  
րաւ արդեօք հանդերձ յօդիւնն գիտութիւնն  
էակացն, և ոչ ասաց առանց յօդի թէ գիտու-  
թիւնն էակաց :

Ի՞նչ են ոմանք որք ասեն եթէ՝ զի ցուցցէ 'ի  
ձեռնն յօդին զհաղորդութիւնն էիցն որ առ մի-  
մեանս 'ի վերուստ արարչականաւն՝ և 'ի ներ-  
քուստ նիւթականաւն :

Վասն որոց ասեմք եթէ ոչ բարեօք ասէք :

Քանզի ոչ եթէ զհաղորդութիւնն էակացն նշա-  
նակէ յօդդ՝ այլ նախագիտութիւնն :

Քանզի յօդդ զվերաբերութիւնն և զվերըս-  
տին յիշումն զոր յառաջագոյնն դք գիտէր նշա-  
նակէ : Քանզի յորժամ ասեմք առանց յօդի  
թէ՝ սրբելն, որպէս յաղագս անծանօթ իրի  
ասեմք

ասեմք : Իսկ յորժամ ասեմք թէ այրն եկն ,  
զ յառաջածանօթ իրս նշանակէ :

Բայց աստուծոյ և յօդոյ ոչ ինչ սյսպիսեացս նշա  
նակէ • բայց եղաւ վասն յայտ առնելոյ զընդ  
հանրութիւն էակացոյ :

Քանզի ունիմք ուսմնիլ և գիտել յառօրեկայսդ  
թէ առանց յօդի առաջարկութիւնք համա  
զօրք են մասնականաց :

Իսկ հանդերձ յօդիւն համազօրք գոն հանրա  
կանաց առաջարկութեանց : Արդ՝ զի յայտ  
արասցէ թէ ամ գոյիցն է գիտութիւն իմաս  
տասիրութեան , վասն այսորիկ հանդերձ յօդիւ  
ասաց թէ գիտութիւն էակացն :

Իսկ ըստ որում էակք են՝ յաճել զի յայտ  
արասցէ զզեարդ գիտելն իմաստասիրութեան  
զգոյս • այսինքն թէ ոչ գիտէ զնոսա ըստ քո  
նիօնութեան , այլ ըստ բնութեան :

Կո Քանզի և ոչ կարողութիւն է զքանիօնութե  
անհատիցն գիտել՝ այլ զբնութիւնն :

Վասն այսորիկ զայս յայտ առնելոյ թէ ըստ  
բնութեան գիտէ և ոչ ըստ քանակութեան ,  
ասաց ըստ որում էակք են :

Արդ՝ յազապս հաւաստութեան առաջնն սահ  
մանին սյս չափ :

**Ե**կե սցուք յերկրորդ սահմանն և հաւաստեա  
լուք որ ասէ թէ՝ իմաստասիրութիւն է գիտութիւն  
թիւն անձայնց և մարդկայնոց իրողը” :

Եւ պարտէ գիտել թէ աստուծոյ զգիտութե  
որպէս

որպէս հասարակ ինչ փոխանակ սեռի առնու ։  
 Իսկ՝ Թճայնոց և մարդկայնոց իրողութեանց՝ փո  
 խանակ բարկացուցիչ զանազանութեանց ։ որք  
 բարկացուցանեն զիմաստասիրութիւն ։ քանզի  
 միայն իմաստասիրութիւնէ որ յաղագս Թճայնոց  
 և մարդկայնոց իրողութեանց եղանի ։

Ի՞նչ ոչ զԹճայինսն արհամարհէ՝ լինելով սակս  
 մարդկայնոց ։ և ոչ զմարդկայինսն առնէ սն  
 փոյթ՝ լինելով սակս Թճայնոցն ։

Այլ՝ Թճայնոցն հետևի և աշակերտի ։ իսկ  
 զմարդկայինսն յարդարէ և ՚ի կատարումն ածէ ։

Ատուտ տարակուսին ոմանք ասելով՝ թէ  
 զհարկ ստէք վասն իմաստասիրութեան թէ  
 գիտութիւնէ Թճայնոց և մարդկայնոց իրող՝ ։

Ասանզի և այլ գոյիցէ գիտութիւն ։ երկնից՝  
 երկրի՝ և Թճ գոյից ։ և այնոցիկ որք ոչ Թճայինք  
 և ոչ մարդկայինք են ։

Նաև յաղագս բնութիւն հոգւոյ ասի իմաս  
 տասիրութիւն, որ ոչ է Թճային և ոչ մարդ  
 կային ։

Չայս տարակուսանա լուծանելով ասեմք՝ թէ  
 վասն զի էակացն են ոմանք որ իմանալիք են՝ և  
 են որք զգալիք ։

Արդ՝ իմանալեացն ծայր Թճայինքն են ։ և զգա  
 լեացս մարդկայինք ։

Արդ զԹճայրս գոյիցն ասելով՝ հանդերձ նո  
 քումքք յարառոցեաց զիմունալսն և զզգալես ։

Պրակ 8 :



րորդ սահմանէ որ 'ի հուպ կատար մանէ որ ստէ , իմաստասիրութիւնէ խոյուն մահու :

Քանզի այսպէս սահմանէ զնա պղատուն 'ի վե ս տրոնի տրամաբանութեանն : Երորդ ձեռն ստէ թէ ' արդարև տագնապին այնքիկ որք հան դիպին ուղարդաբար մերձեցեալք յիմաստասիրութիւն • մուանալով զնոսին իսկ զինքեանս և զայլն :

Ոչ այլ ինչ խոկալ՝ քան զմեռանիլն և զէ մեռանիլն : Եւ բարւոյք տու կայանան երկոքեան մեռանիլն և է մեռանիլն :

Քանզի 'ի ձեռն մեռանելոյն զգործնական իմաստասիրութիւնն մեկնեաց :

Քանզի իմաստասէր 'ի մեռանիլն իւրում ունի զգործնականն • քանզի յայնժամ մեռելութի բացագործէ ախտից :

Իսկ ստելով՝ է մեռանիլ՝ զտեսականն յայտնեաց :

Քանզի է մեռանիլ՝ զանցեալ ժամանակն նշանակեաց • և իմաստասիրի՝ յետ մեռանելոյնէ տեսականն :

Քանզի յետ մեռուցանելոյ զախտս՝ և մաքրելոյ և սրբելոյ զհոգին՝ վերածգտի 'ի տեսութիւն

Թիւն, և սիւղըն առնէ Թաքանելոյ :  
 Քանզի Թէ ոչ մեռելու Թիւն բացագործից  
 տխտից և սրբից զհոգին, ոչ կարէ Թաքա-  
 նել : Վասն զի ըստ պղատոնի՝ անաւրբն ՚ի սք  
 հպիւ ոչէ բարւոք և իրաւ :

Ի՞նչ այսոքիկ այսպէս :

Բայց տարակուսին ոմանք ասելով՝ Թէ զի արդ-  
 պղատոն զիմաստասիրութիւն խոկումն մահու-  
 անէ գով : Ասելով Թէ՝ ով պղատոն՝ զի արդ-  
 իմաստասէր հըմտասէր զինքն արտահանէ, այս  
 ինքն ի բաց բսունայ, և հարբտտահարութիւն  
 խոկոյ ընդ դէմ արարչին • կամելով զկապս լու-  
 ծանել զոր նայն կապեաց, այսինքն զվիւճորու  
 Թիւն հոգւոյ և մարմնոյ :

Ի՞նչ որպէս զի ոչէ պարտ ումեք զինքն արտահա-  
 նել՝ այսինքն ՚ի բաց բառնալ՝ ցուցանի ՚ի բա-  
 զում ձեռնարկութենէ :

Մտխ ՚ի նմին իսկ պղատոնէ • քանզի և ասէր  
 իսկ պղատոն ՚ի նոյնում տրամաբանութե Թէ՝  
 որպէս ասն յումեմն արհարանում եմք • և ոչ  
 է պարտ զինքն յայսմանէ արտահանել ումեք և  
 տարափախել :

Իսկ յերկրորդ ձեռնարկութենէ ցուցանի Թէ՝  
 արդարև իմաստասէրն նմանէ այ որպէս յառա-  
 ջագոյն ցուցալք • ցուցեալ զնա այսոքիւք  
 կերպարանեալ որովք և զանձայինն :  
 Իսկ նմանն այ՝ ոչ արտահանէ զինքն այսինքն ի բաց  
 բառնայ :

Յայտէ թէ և ոչ իմաստասէր իբաց բառնայ  
զինքն թէպէտ և խոյաց զմահ :

Է՞ զի նմանն ա; ոչ իբաց բառնայ զինքն՝ յայտէ :  
Չի տմենայն որ իբաց բառնայ զինքն, ոչ միայն  
ոչ նմանի ա, այլ և հակառակ նմին է • կամե լով  
իբաց բառնալ զոր նոյն կտպեաց, և անջատե լ  
զհոգի ՚ի մարմնոյ :

Իսկ յերրորդ ձեռնարկու թե նէ յայտմանէ, Թճաց  
ին բնութիւնն ոչ երբէք որոշէ զինքն յերկրոր  
դէն • այսինքն ՚ի մարդոյ • բայց թէ յանպատ  
կանաւորութե նէ մարդոյ :

Քանզի յայնժամ թո՛ւ ի որոշե լ զինքն ՚ի նմանէ :  
Է՞ արդ՝ որպիսի ինչ է գոր ստեմբս :

Որպէս արեգակնային լյս առ հասարակ զամե  
նեսեան լուսաւորի՞ • բայց թէ յանպատկա  
կանաւորութե նէ տեսարանացն թո՛ւ ի զոմանս ա  
ռաւել լուսաւորե լ և զոմանս նաւալ :

Քանզի են ոմանք որ առողջ ունին զտեսարանն,  
և են որք տկարք :

Է՞ յայտմանէ թո՛ւ ի զոմանս առաւել լուսա  
ւորի լ և զոմանս նաւալ :

Նայնպէս և Թճացինն ոչ երբէք որոշէ զինքն ՚ի  
մարդոյ • այլ ամենեցուն հաւատարապէս ինտմէ՞ :  
Ա լ վամն տկարութեան ընդունողն և վամն ոչ  
առբն գոլոյ յախտից, թո՛ւ ի զինքն որոշե լ  
՚ի նմանէ :

Արդ՝ այսպէս և իմաստասէրն ոչ այնպէս խոյաց  
զմահ որպէս թէ անջատե լ զհոգին յերկրոր  
դէն

դէն այսինքն 'ի մարմնոյն • քանզի մարմին որպէս  
ազգականն լի՝ երկրորդ կոչե հոգւոյ :

Իսկ 'ի չորրորդ ձեռնարկու թեանէ յայսմանէ,  
թէ՛ առաջին առաքինու թիւն բարերջանկու  
թիւնէ • և մայր իմաստասիրու թեան առաքի  
նու թիւնէ • վասն զի՛ իձեռն առաքինու թեան  
ստանալք զ'մաստասիրու թիւն :

Իսկ բարերջանիկն և այն որ ըստ առաքինու  
թեան կեայ՝ ոչ տրտմի • ոչ ի վերայ մարմնակա  
նոցն փորձու թեանց՝ և ոչ ի վերայ արտաքնոցն,  
այսինքն ընչն :

Իսկ որ ոչ տրտմի ի վերայ մարմնականայն փորձու  
թեանց և ոչ ի վերայ արտաքնոցն, այնպիսին և ոչ  
տրտահանէ զենքն :

Կոյ պէս և իմաստասէրն ըստ առաքինու թեան  
կենցաղաւարտ լով՝ ոչ տրտմի • ոչ վասն մարմնա  
կան փորձու թեանց և ոչ վասն արտաքնոցն :

Իսկ որք տրտմինն և տխրին 'ի վերայ մարմնա  
կանացն և 'ի վերայ արտաքնոցն, լսեսցեն :

Չտեսցեալսն առ 'ի հիպոկրատայ որ ասէ, վր  
տարփորձու թեանց՝ իւրական ստանան զտրտ  
մու թիւն :

Չայտասիկ յայտ առնէ և պղատուն թէ՛ որ ըստ  
առաքինու թեան կենցաղաւարի ոչ տրտմի ոչ  
վասն մարմնականաց փորձու թեանց և ոչ վասն  
արտաքնոցն :

Քանզի և նա հարցեալ յուժեմնէ թէ՛ սողէ ասան  
ինձ ով պղտմին՝ թէ այնպիսին որ յիւրու մ կեն  
դա

դանու թեան 'ի պաիմակաման անկառ փորձու-  
 թիւնս, գեղին ետես չարեօք ըմբռնեալ, և  
 յետ վախճանելոյն գտառ անթաղ ընկելեալ  
 բարեբջանիկ գոյ թէ ոչ :

Պատասխանեաց, իբայ տար 'ի բումմէ կարճ-  
 մրտութենէդ . քանզի ոչ ինչ զհոգեկան առա-  
 քինութիւնս լուծանէ :

Արդ՝ այսոցիկ այսպէս գոյով գինչ ունիմք ա-  
 սեւ պղատոնի, որ երբեմն ասէ՝ պարտէ խո-  
 կոյ զմահ . և երբեմն թէ՛ ոչ է պարտ գինչն  
 արտահանել : Անդ դիմանայր արդեօք ինքեան  
 թէ ոչ : Ի՞նչ ասեմք եթէ ոչ :

Այլ զի զայս ցուցցուք եթէ ոչ ընդ դիմանայր  
 ինքեան՝ ասասցուք դու զնաքեսայ ինչ :

Պարտէ գիտել եթէ՛ կենդանութիւնէ ունա  
 կութիւն՝ և պատճառ կելոյ :

Իսկ մահ պակասութիւն՝ և պատճառ ոչ գոյոյ :  
 Ի՞նչ իւրգբանչիւրք 'ի սոցանէ երկակի ասի  
 գոյ . քանզի և է իսկ երկակի :

Կենդանութիւն՝ է որ բնական՝ և է որ յօժա-  
 րական :

Արդ՝ բնական ասի շարամերձութիւն հոգւոյ  
 և մարմնոյ . ըստ որում զպոյութիւն ասի տալ  
 հոգի մարմնոյ և շարժումն . ըստ որում անքն  
 ասիմք կեալ . ըստ որում մարմինն կրել ասի  
 զհոգին :

Ուստի և կապարան զմարմին բացակոչէ հոմերոս :  
 Ասանորոյ մարմին կոչի, այսինքն ընդարմ . վր

զի ընդարմացուցանէ զՏոբին և ընդ արմանանայ  
'ի գեղեզմանի :

Իսկ յօժարական կենդանութիւնէ՝ յորժամ  
յուեգոյնն յաղթէ լաւագունին • այսինքն յոր  
ժամ Տոբին յաղթի 'ի մարմնական Տեշտախ-  
րութեանց :

Ընդ որս և անսուակ կեանք կոչեցան • այսինքն  
նչ սղջախոճ : Իսկ բնական մահ է անջատումն  
Տոբւոյ 'ի մարմնոյ • ըստ որում՝ ամենեքեան  
վախճանիւք :

Իսկ յօժարական մահ է ըստ առաքինութեան  
կենցաղավարութիւն • այսինքն յապրիլ կեն-  
դանւոյն յորժամ խակումն լինի մահու վասն մե-  
ռելութիւն գործելոյ ախտից :

Արդ՝ այսոցիկ այսպէս գորով՝ չորքս այսոցիկ  
յայտցանէ • գոյն, ոչն գոլ • բարւոք գոլ, չարն  
գոլ : Արդ՝ գոյն է բնաւորական կենդանու-  
թիւն • իսկ ոչն գոլ՝ բնաւորական մահ :

Ի՞նչ բարւոք գոյն՝ յօժարական մահ • իսկ չար  
գոյն՝ ակորժական կենցաղավարութիւն :

Արդ՝ յորժամ ասէ պատանս թէ պարտէ խս-  
կալ, զախորժական մահաւանէն ասէ :

Այսինքն թէ պարտէ ըստ առաքինութեան  
կեող և մեռելութիւն գործել ախտիցն :

Իսկ յորժամ ասէ թէ ոչն պարտ գինքն արտա-  
հանել, զբնաւորական մահն նշանակէ ըստ ո-  
րում՝ ամենեքեան մեռանիւք :

Եւ այսոցիկ այսպէս :

Իւ

Եւ պարտէ գիտել եթէ՛ ոմն կղէոմբռ ոտոս  
ամբռիկիտայի՛ կարծելով թէ պղզատուն զբնա-  
ւորական մահո՛ւանէն հրամայէ խոկալ իմաստա-  
սիրին, ընկեցեալ զնկքն՝ ՚ի պարսպէ վտխճա-  
նեցաւ :

Ղան որոյ ստէ կաղնմբռ, ուրախացել քվա-  
րեգակն, կղէոմբռ ոտոս ամբռիկիտայի վազեալ  
՚ի բարձրաբերձ պարըսպաց՝ ՚ի դժոխս, արժանի  
ինչ ո՛չ ուսեալ մահու, այլ չար զպղատոնի յա-  
ղագս հոգւոյ գիրն ընտրեալ :


Ու այստիկ ասաց ոլոմպիադ որոս փիլիսոփոս,  
եթէ ո՛չ պղատոնականն գիր զեմն էր նահան-  
ջեալ զյարձակումն, այն ինչ անա տաժանու-  
բար լուծանէի զյոքնս թախանձ կնայ կենցա-  
ղոյս : Արդ՝ զե մի եղեցին բազում կղէոմբռո-  
տոսք՝ առադրեսցուք ՚ի սահմանն և զնոյն նշա-  
նակ պահելով ասացուք այսպէս :

Իմաստասիրութիւն է խոկումն մահու յսպրիլ  
կենդանոյն՝ որով հնարիցի խոկումն մահու :

Բայց մահ պարտէ աստանօր իմանալ ո՛չ զբնա-  
ւորական մահն, այլ զախորժականն, որով մե-  
ռելութիւն գործէ ախտից :



## Պրակ 9 :



Այն արդ՝ վասն զի պղտտոն զմաստատարու  
 թիւն խոկումն մահու սահմանեաց,  
 կարծեցեալ ըստյիկեանքն թէ վասն բնաճո  
 րական մահուն ատ :

Իսն և յարարենն եղանակս ոմնա, ըստ որոց  
 յիրաւի որ զինքն իբաց բառնայ :

Էւ տեսն, վասն զի առաջիկայ կենցողս այս մե  
 ծի երախանի նմանեալ գոյ՝ յայտէ • ըստ որ  
 չափից եղանակաց երախան լուծանի, ըստ այն  
 քանեաց յիրաւի որ զինքն արտահանէ :

Կա քանզի և ատեն ըստ չ եղանակաց լուծանի  
 երախան :

Կամ վասն կարօտութեան կերակրոց • զի կա  
 րօտութիւն ելլ կերակրոց, յիրաւի յառնեն  
 կոչնակարքն և լուծանի երախանն :

Արդ՝ այսպէս և վասն կարօտութեան ընչեց յի  
 րաւի որ զինքն արտահանէ այսինքն իբաց բառ  
 նայ • ոչ կամե լով ծախիլ՝ ի սովա :

Որպէս և թէ ոգնիս յայտ առնէ առ ոմն կիւռ  
 նաս ատե լով՝ պարտէ յողջատութեանէ փախչել  
 և ՚ի մեծալի ատ զին անկանիլ ծով, և ՚ի վիմաց  
 ովկիւռնէ հոսիլ արեգակնակոխ :

Եւ արդ՝ պարտէ գիտել, եթէ ոչ զայն ատէ  
 եթէ

Եթէ պարտէ տնանկին զնքն իբաց բառնալ,  
այլ զայն սուէ թէ պարտէ տնանկին ամենայն ու-  
րեք սեբմանէ՛ և ՚ի վեհս անկոխս • Թէ հնար  
ինչ իցէ և ՚ի ծախս :

**Ը**ստ երկրորդ եղանակի դարձեալ լուծանի  
երսնան՝ վասն շնեւոյ շարահաճ զկերակուրն և  
զեղամակարդացեալս • քոնոյ՝ պատկոտաց եւոյ  
կէ բակրոց՝ յիրս՛ յառնեն կոչեցեալքն և լու-  
ծանի երախանն :

Արդ՝ այսպէս և մարմնոյ ուրուք շարահաճեւոյ և  
անպատկանաճորեւոյ առ ընդունիլ զանձնաճո-  
րական սղգմունս, յիրս՛ն արտահանէ իբաց  
քեցեւոյ զնքն ՚ի սաճեւոյ :

Արդէս և ոնն շնակն փիլիսոսփայ կիսադօս գո-  
լով մատեաճ առ յուլիանոս թագաւոր ասեւով,  
կէս մարմնոյ իմոյ մեռաճ և կէսն տեսանէ զտիճ •  
Գթա՛ ով թագաւոր ՚ի կիսակտուր շնականս :

Ը յփնքն թէ հրամայեան կամ բժշկեւ կամ  
սպանանէ :

Առ որ ասաց թէ՛ զերկոտեան գրկես և զպղտաին  
և զփայլիթ ոջն : Եւ մեմե՛ պակասեալ՝ և զուն  
տակաճին և ս տեսանէ լով :

**Ը**ստ երրորդ եղանակի դարձեալ լուծանի  
երախան, յորժամ է վասն առանձնական տաղ-  
նապի կոչատեառն :

Բան լե կոչատեառն կամ յանկարծակի հիւան  
դանալ՝ և կամ լսել զկորուտ սիրելոյ, յառնեն  
կոչեցեալքն և լուծանի երախանն :

Ի՞նչ արդ այսպէս՝ թէ առանձնական ումեք տագնապ հառանիցէ, յիրաւի իբաց բառնայ զինչն, որպէս արար պիժագորուհին տիմիքտեայ որ կոչեցաւ թէանովն :

Քանզի նա անկեալ՝ ի բուռն սիկիլացւոց բռնաւորին, և հարցեալ թէ ընդ է՞ր ոչ ուտեն պիժագորականքն ըզմե՞ծ ոլոռուես, ասէ՛ր՝ կերայց քան թէ ստացից :

Ի՞նչ յասե՛լ բռնաւորին թէ կեր, ասէր, ստացից քան թէ կերայց : Ի՞նչ այսպէս ծամելով զլեզուն վախճանեցաւ :

Աստ չորրորդ եղանակի դարձեալ լուծանի երախան վասն արթեցու թեան :

Քանզի արթեցու թի հանդիպելոյ կոչեցելոցն՝ յիրաւի լուծանի երախանն : Այսպէս յիրաւի որ զինչն իբաց բառնայ յորժամ՝ ի վերջնն հասանիցէ ծերութի և զառանցիցէ, և սկիզբն առնէ աղճատելոյ և բարբանջելոյ :

Ասկ ըստ հինգերորդ եղանակի դարձեալ լուծանի երախան, յորժամ ըսկիզբն առնեն կոչեցեալքն կռուելոյ՝ և անիրաւս առփմեանս առնել :

Այսպէս և յիրաւի որ իբաց բառնայ զինչն յորժամ ըմբռնեալ՝ ի թշնամեաց՝ հրամայէ առնել ինչ անիրաւս . կամ ընդ մօր անկոնիլ կամ անապատե հս ինչ ուտել :

Ասկ ըստ վեցերորդ եղանակի լուծանի երախան, վասն հասարակական տագնապի :

Քանզի հասարակական տաղնապի հասանելոյ՝  
կամ հրայրեցութեան՝ կամ շարժման՝ կամ արք-  
շաճանաց բարբարոսաց, յսանե եղջեյեալքն  
և լուծանի երախանն ։

Այսպէս յիրաճի ոք զենքն իբաց բաճայ ՚ի  
հասարակականն տաղնապէ հասն լոց, և թ շար-  
մեացն այն ինչ բզ բաղաքն առնուլ հուպ եղե-  
լոց, և նարս յե ըկիւղէ անտի յողթ տնարեցե լոց ։

Արդ՝ զայստիկ սառչիկն անքն ։

Ասկ այլք՝ ե ըկու միայն եղանակս յարարքնն,  
ըստ որոց յիրաճի ոք զենքն իբաց բաճայ ։

Քանզի ասեն թէ՛ առ ՚ի կեալ կենցաղս է կամ  
լաճ կամ յուր կամ միջակ ։

Արդ՝ յորժամ ոք ՚ի լաճումն կամ միջակումն  
գոլով՝ տեսանէ զենքն ՚ի յուրն արտամիտն ալ՝  
յիրաճի իբաց բաճայ զենքն ։

Իճ դարձեալ ՚ի յուրեքումն գոլով՝ տեսանէ  
զենքն ոչ երբէք ՚ի լաճագոյնն վերաթ եեալ՝  
յիրաճի իբաց բաճայ ։ Իճ արդ այսոքիկ այս  
պէս ։ Ալանորոց ասեմք թէ ոչ ըստ իրաճանց  
և ոչ ըստ անիրաճութեանց պարտէ զենքն իբաց  
բաճայ ու մէք ։

Քանզի ոք զայնն այսպէս կամին կամ խորհին,  
ընդ դիմանան արարչնն. հարստահարութե կա-  
մեալ զկապն լուծանել զոր նայն կապեաց ։  
Իճ պարտէ հաճանիլ պղատոնի որ ասէ թէ՛ ող  
ախար յու մեմն պահարանն մեմք. և ոչէ պարտու մեք  
յայսմանէ զենքն արտահանել և տարապատչել ։

Այլ կայ թնալ կապեցելու մն մինչև նա լուծցէ ։  
 Իսկ փորձու թիք ուրեք թէ պատահիցին՝ ոչ վր  
 այսորիկ՝ որպէս թէ ումեք պարտէ զնրքն իբաց  
 բառնալ, այլ վասն փորձելոյ զհոգին ։

Քանզի որպէս լաւ նաւապետ ոչ ՚ի հանդարտու  
 թեան ծովուն, այլ ՚ի յուզման սլեացն փորձի ։  
 Եւ այնպէս և վեհագոյն հոգի ՚ի փորձու թեան  
 նահատակի ։

Ուստի և ճեմականքն կամելով զժուժկալու թե  
 հոգւոց ցուցանել՝ աղօթէին ասելով՝ ևս տե  
 ղեան ՚ի մեզ փորձու թիւն ։

Հանդիպել է Առաջիկայ ։

Պրահ ժ ։



ամբառնայ այսու հետեւ աստուտ պղա  
 տոն ՚ի հեռի կատարումն ։ և ոչ պարզա  
 բար ՚ի հեռի ։ այլ և՛ս ՚ի հեռագոյնն որ ոչ ինչ  
 ևս է քան զնա անդր ։

Քանզի սահմանէ զիմաստասիրութիւն նմանու  
 թիւն այ ըստ կարողութեան մարդկան ։

Քանզի զնչ այնպէս երանելի և վայելուչ կա  
 տարումն որպէս զնմանիլ այ ըստ կարողութեան  
 մարդկան ։ Ասանորոյ ասեն ոմանք թէ ոչ կա  
 րէ իմաստասէրն որպէս մարդ գոյով նմանիլ այ ։  
 Զորնիւ թե ն այսպէս ։

հոլ

էութիւնն այլ և մարդոյ զանազանն է . որպէս և  
քերթօղն յայտ առնէ ասելով, վասն զի ոչ ինչ  
ցեղ նմանութիւն է անոց անմահից և գետնա-  
կոխաց մահկանացո՞ւայ մարդկան :

Իսկ որոց էութիւնքն զանազանք են՝ այնոցիկ  
և կատարելութիւնք զանազանք գոն :

Ո՛րքոն, այլ է էութիւն մարդոյ և այլ ձիոյ . և  
այլ կատարելութիւն մարդոյ և այլ ձիոյ :

Արդ՝ եթէ զանազանն է էութիւնն այլ և մարդոյ,  
և որոց էութիւնքն զանազանք են՝ զանազանք են  
և կատարելութիւնքն . և յայտ է թէ այլ  
կատարելութիւնն է այլ և այլ մարդոյ :

Վասնորոյ ոչ կարէ իմաստասէրն նման գոլայ .

**Ա**րդ զի զտարակուսանս զայս լուծանել վու-  
թամք, ասացուք եթէ ըստ ո՛րում նշանա-  
կութիւն ասեմք աստանօր նման զիմաստասէրն այլ :  
Այլ նախ ասացուք եթէ ըստ քանի՛ ե զանա-  
կաց ասի նման :

Ի՞նչ պարտէ գիտել եթէ ըստ չորից ե զանակաց  
ասի նման :

Քանզի նման ասի այն՝ յորժամ նոյն որակութիւն  
ի բոլորում տեսակում տեսանի :

Ո՛րքոն՝ յորժամ զբոլոր եթովպացիսն նմանս  
միմեանց ասեմք գոլ ըստ սեռոյն : Ի՞նչ զամենայն  
կարափ նման միմեանց ըստ սպիտակիլն :

Դարձեալ ասի նման յորժամ նոյն որակութիւն  
ի զանազան տեսակս տեսանի ըստ առա՛ւելութեան  
թեան

Թեան և ըստ նոճազու թեան : Որպէս զսպիտակ  
պղպեղ և զսեւած՝ նմանս միմեանց ասեմք գոլ  
ըստ ջեբմայնոյն • քանզի երկուքին ջեբմայնք են,  
այլ ըստ առաւելութեան և նոճազութեան •  
Քանզի սեւածն առաւել ջեբմայնէ, իսկ սպի-  
տակն նոճազ :

Դարձեալ ստի նման և այն՝ յորժամ զանազան  
որակութիւնք՝ ի գանազան տեսակս գտանին •  
Որպէս ըղ հօփայն և զաղաւնին նմանս միմեանց  
ասեմք գոլ, զնոյն որակութիւնս ունելով :

Քանզի որպէս հովփայն գանազան որակութիւնս  
ունի զսպիտակն և զխարտեւաշն և զսեւածն,  
նոյնպէս և աղաւնոյն ասեմք զնոյն որակութիւն  
ունել :

Դարձեալ ստի նման միմեանց որպէս պատկերն  
և յարացոյցն : Քանզի ասեմք զպատկերն սոկրա-  
տայ նման գոլ սոկրատում :

Ի՛նչ պարտէ գիտել թէ՛ յարացոյց ստի նախատիպն  
ըստ որում պատկերն եղև :

Որպէս յորժամ զոսկրատէս յարացոյց ունելով՝  
զպատկերն սոկրատայ ասեմք նման գոլ սոկրա-  
տում : Արդ՝ ըստ այսմ նշանակութեան ա-  
սեմք զինաստանէրն նման գոլայ, որպէս զպատ-  
կերն սոկրատայ սոկրատում : Թէպէտ և այլէ  
պատկերն սոկրատայ և այլ սոկրատէս • քանզի  
ոմն շնչաճոր և ոմն անշունչ :

Ըստ նկին օրինակի և նշանակութեան ասեմք զինաս-  
տանէրն նման գոլայ ըստ կարողութեան մարդկան •

Թէպէտ և այլ էութիւնէ այ և այլ մարդոյ

**Ե** զի իմաստասէրն նման է այ աստուտ յայտ  
եղիցի • քանզի որովք կերպարանի թծայինն,  
նորիմք կերպարանի և կատարեալ իմաստա  
սէրն : Քանզի երիւքս այսորիւք աստուածայինն  
կերպարանի • բարեաւն և գիտութեամբ և  
կարողութեամբ :

Որպէս և քերթութիւնն յայտ առնէ ասելով  
վասն բարւոյն՝ Թէ թծք տուողք բարեաց են :  
Աս գիտնականին՝ Թէ թծք զամ ինչ գիտեն :  
Իսկ վասն կարողութեան՝ Թէ թծք յամի կա  
րողք գոն : Կոյնպէս և կատարեալ իմաստասէրն  
երիւքս այսորիւք կերպարանի • բարեաւն և  
գիտնականաւն և կարելեաւն :

**Ե** բարեաւն , զի որպէս թծայինն թմցուն  
խնամ ածէ , նոյնպէս և կատարեալ իմաս  
տասէրն անկատար ոգւոց խնամ տանի , 'ի ձե  
ռն գիտութեան զանկատար և զոգէտ հոգի  
'ի կատարեալ գիտութիւն փոխելով :

Իսկ գիտնականաւն կերպարանի , ող թծայինն  
զամ ինչ գիտէ , նոյնպէս և կատարեալ իմաս  
տասէրն զամ ինչ խոստանայ գիտել :

Իսկ կարելեաւն՝ զի որպէս թծայինն զամ ինչ  
կարէ և կամի , նոյնպէս և կատարեալ փիլիսո  
փայն որ չափ ինչ կարող գոյ և կամի :

Արդ՝ այսորիկ այսպէս : Այ և ասեն ոմանք  
Թէ զհարդ ասէք զիմաստասէրն նման գոլ  
այ բարեաւն և գիտնականաւն և կարողութեան

որ ըստ բերթողին ոչէ նման ցեղանմանից անոց  
և գետնակոխաց մարդկան :

Առ որս ասեմք թէ՛ վա այսորիկ սու գոյացու  
'ի տահմանին՝ ըստ կարողութեան մարդկան :

Քանզի որ չափ ինչ կարողութիւն է և հասու մն  
մարդոյ՝ թո՛ւր՝ նմանիլ իմաստասէրն այ :

Վարզի ոչ նայելու է ոչ բարին և ոչ գիտնականն  
և ոչ կարողն առ այ և առ մարդոյ :

Քանզի այլաբար է առ յայ բարին , և ոյլ  
սու 'ի մարդոյ : Վարզի բարին էակացեալ է այ  
և էութի այ է բարին • ուստի և անկարութի է

ընդունակ լինիլ չարին վա առա՛ւելութեան  
բարւոյն : Որպէս արեգակն անընդունակ ասի

լինիլ խա՛ւարի վասն առա՛ւելութեան լուսոյն :

Իսկ մարդ՝ ունակութեամբ ունի զբարին • ուս  
տի և ընդունակ է չարութեան : Ող և օղդ ըստ

ընդունակութե՛ ունիլ ասի զլոյս , վասնզի 'ի  
ծագիլ արեգականն լուսա՛ւորի , ուստի և ըն

դունակ ասի գոլ խա՛ւարի • քանզի 'ի մտանէլ  
արեգականն խա՛ւարի :

Ի՞նչ դարձեալ այլաբար է գիտնականն առ յայ  
և այլաբար սու 'ի մարդոյ : Քանզի ան միշտ

և միաբան զամ գիտէ • և ոչ է ժամանակ յա  
րու՛մ ոչ գիտէ • այլ միշտ և միաբան զամ գիտէ :

Իսկ մարդ ոչ միշտ և ոչ միաբան զամ գիտէ •  
քանզի և ոչ տակա՛ւին և ս՛նեալն գիտէ ինչ

ներգործութեամբ • այլ գորութեամբ սսի  
գիտել :

Ի՞նչ դարձեալ մարթ է այսօր ինչ  
և թէ

եթէ գէպ լինի գիտել ումեք և այգուցն մու-  
 ռանայ : Ի՞նչ ոչ գամ գիտել , այլ ըստ մա-  
 սին : Քանզի յայտ ժամանակի զայլ ինչ գիտե՛-  
 և յայլ ժամանակի այլ ինչ : Որպէս յայտ առ-  
 նէ և պղատուն ասելով՝ թէ արորթելն է ո՞-  
 բում գէթ 'ի ծերութեանն իմաստասիրութի  
 և խոհեմութիւն առ ընթեր է :

**Ե**ւ զարձեալ այլաբար է կարողութիւն այ՛-  
 և այլաբար առ 'ի մարդոյ :

Քանզի անդրադարձի՛ առ յայն . վասնզի որչափ  
 ինչ կամի և կարէ , և որ չափ ինչ կարէ և  
 կամի : Ի՞նչ ոչ ինչ պատշաճիցի անկարութի  
 առ յայ : Իսկ առ իմաստասիրին ոչ անդրա-  
 դարձի . քանզի որչափ ինչ կարէ և կամի , այլ  
 ոչ որչափ ինչ կամի և կարէ :

Մտնի թէ կամիցի ձեռամբ բուռն հարկա-  
 նել զարեգականէ , և կամ ստեղծանել եր-  
 կինս , ոչ կարէ : Ապա թէ դք ասիցէ՛ թէ ոչ  
 կամի անկարելի իր ինչ կատարեալ իմաստա-  
 սերն , այլ այնոցիկ տենչայ որոց և հասանիլ  
 կարող գոյ : Քանզի ստոյիկեանցն մեծ կարո-  
 տութիւն է 'ի վաշխ տենչանացն անլիութի :

Ասեմք եթէ՛ որպէս գիտելով զիւր տկարու-  
 թիւն բնութեան ոչ տենչայ անհասիցն , այլ  
 այնոցիկ տենչայ որոց և հասանիլ կարող գոյ :

Արդ այսոքիկ այսպէս :

**Բ**այց տարակուսին ոմանք ասելով՝ թէ ո՛ւր  
 սահմանեաց պղատուն զիմաստասիրութիւն  
 նմա

Նմանութիւն այլ ըստ կարողութեան մարդկան :  
 Ի՞նչ տեսնէք թէ 'ի թեւեւայ տրամաբանութեան :  
 Քանզի անդ առ թէողորոս ոմն երկրաչափ  
 առնելով զիսոսս ստէ այսպէս :

Այլ վս զի ով թէողորէ ոչ կորնչել չարեաց  
 կարողութիւն գոյ . քանզի հակառակ իմն  
 բարեոյ գոյ հարկաւորի', և ոչ առ ան ըզ  
 նորա է զետեղիլ . այլ զայս մահկանացու թք  
 նութի' զայսր տեղեւան շրջաբերի 'ի հարկէ :  
 Ամստոյ պարտէ ջանսլ փոխչիլ աստուտ  
 անդր զվազագոյնն : Արդ զի նչէ փախուսն,  
 նմանութիւն այլ ըստ կարողութե մարդկան :  
 Իսկ նմանութիւն է քան և արդարն գոյ հան  
 դերձ խոհեմութեամբ :

Իարձեալ ասեն եթէ ոչ սահմանեաց զիմաս  
 տասիրութիւն , այլ զփախուսն 'ի չարեաց :  
 Առ որս ասացուք թէ' և փախուսն 'ի չա  
 րեաց ոչ այլ ինչէ , եթէ ոչ իմաստասիրութի :  
 Այլ թի իմաստասիրութիւն է որ զմեռելու թի  
 ախտից բացագործէ , որպէս բազում անգամ  
 վերադոյնն սահմանեցուք զնա խոկումն մահու  
 Իսկ մեռելու թիւն ախտից ոչ այլ ինչէ' եթէ  
 ոչ փախուստ 'ի չարեաց . և յայտ է թէ զիմաս  
 տասիրութիւն սահմանեաց :

Ի՞նչ դարձեալ' թէ արդարև արդարութիւն  
 և խոհեմութիւն առաքինութիւնք են . իսկ  
 տեղի իմոտասիրութեան առաքինութիւնն է .  
 վս զի 'ի ձեռն առաքինութե զիմաստասիրութի

ստանումք : Ապա յայտ է թէ 'ի ձեռն անտ-  
լոյն՝ լենիլ արդար հանդերձ խոհեմութեամբ ,  
զիմաստասիրութիւն սահմանեաց :

Եւ ևս վստն ասելոյն՝ խոհեմութեամբ , զտե-  
սակրանն սահմանեաց • վստն զի խոհեմութիւն  
կատարումն բանին է : Իսկ և կատարումն տեսա-  
կանին կատարելութիւն բանին է , այսինքն բա-  
նին գիտութիւն :

Եւ յայտ է թէ ասելոյն՝ հանդերձ խոհեմու-  
թեամբ՝ զտեսականն նշանակեաց : Իսկ ասե-  
լոյն՝ սուրբն և արդարն գոլ՝ զգործականն :

Վասն զի սուրբն և արդարն՝ առաքիլութիւնք  
բարուց են :

Իսկ կատարումն գործականին առաքիլութիւնք  
զարդարումն բարուց : Արդ՝ այսոքիկ այսպէս :  
Բայց ինդրեն ոմանք թէ վասն էր առկայացան  
երկոքին սուրբն և արդարն :

Եւ ոմանք ստեն թէ՛ սքն առաւելութիւն է  
արդարոյն , ուստի և զանչափ անիրաւնն անսք  
ստեւք գոլ : Բայց լաւագոյն է ասելն թէ զա-  
նազանին 'ի միմեանց սքն և արդարն :

Վասն զի արդար այն ասի , որ ըզ զուգաւորու-  
թիւն համեմատ էակացն պահէ :

Իսկ սուրբ է՝ որ անայնոյն ունի փոյթ յանձին :  
Եւ զի այսոքիկ 'ի միմեանց զանազանին՝ յայտ  
առնէ պղատոն գրելով երկուս տրամաբանութիւն :  
'ի միումն մակագրեաց՝ յաղագս արգարոյ՝ կամ  
քաղաքավարութեան :

Ի՛նչ 'ի միւսուսն՝ և թ իսիո ոն յաղագս սԲԿ՝ յուրում վասն անային իրաց ծանուցանէ :

Ի՛նչ այսոքիկ այսպէս :

Բայց տարակուսին տմանք թ է՛ վասն զի չորք սուտքինու թ իւնք են հոգւոյ, արիու թ իւն՝ արդարու թ իւն՝ ողջախոհու թ իւն՝ խոհեմու թ Ի՛ զի՛ զմին միայն առտանօր յիշեաց զարդարու Ի : Առորս ստեմք նախ առաջին թ է՛ և զխոհականու թ իւն յիշեաց • քանզի ասաց թ է՛ արդարն և սԲն գոլ հանդերձ խոհականու թ եամբ :

Երկրորդ՝ թ է և զարդարու թ իւն միայն յիշեաց՝ ոչ ինչ տնտեղի լինին որպէս ցուցանեմք : Ի՛նչ սարտէ գիտել թ է՛ և երեք մասնեայ գոլով հոգի, քանզի ունի բան ցասուսն և ցանկու թ Ի, չորք են առաքինու թ իւնք հոգւոյ • արիու թ Ի, արդարու թ իւն, խոհականու թ իւն, ողջախոհու թ իւն :

Ի՛նչ այսոքիկ յիրաճի • վասն զի պարտէ զի իւրաքանչիւր մասն հոգւոյ՝ իւրականն զարդարիլ առաքինու թ եամբ : Ստորի բան՝ խոհականու թ եամբ զարդարեալ գոյ :

Իսկ բարիութիւն արիու թ եամբ • իսկ ցանկու թ իւն ողջախոհու թ եամբ : Ի՛նչ վասն զի ոչ միայն պարտէ իւրաքանչիւր մասին առանձնականա՛ւ զարդարիլ սուտքինու թ եամբ, այլ և յարմարումն առ միմեանս և բարեկարգութե պահիլ • վասն այսոքիկ և արդարու թ իւն ընդամենս սեանս անցեալ երևի • զի մի՛ միայն 'ի միւսում

ուժ ասին , այլ և յամենեւեան 'ի մատուենն  
տեսանիլով յարմարութիւն և բարեկարգու  
թիւն պահեացի :

**Ե**րրպէս յամուժ տեսանեմք զոմանս միայն  
իշխան գոլ , որպէս ձօնայինն . և զոմանս իշխան  
և ընդ իշխանութեամբ , որպէս զմարդկայինս .  
քանզի մարդկայինք՝ ընդ իշխանութեամբ են  
ձօնայնոցն , և իշխան անասուն կենդանեացն :  
Իսկ այլքն ընդ իշխանութե միայն . որպէս նո  
քին իսկ տնասուն կենդանիքն : Ըստ նմին օրինա  
կի և 'ի մարդուժ իբր 'ի փոքր աշխարուժ ըստ  
զիմուրիտոսի՝ այսոքիկ տեսանին :

Ոմանք իշխեն միայն որպէս բան . և ոմանք  
իշխեն և իշխին որպէս բարկութիւն . քանզի  
բարկութիւն իշխի՝ 'ի բանէ , և իշխէ ցան  
կութեան : Իսկ ոմանք միայն իշխին որպէս  
ինքն ցանկութիւն :

Արդ՝ այսոցիկ այսպէս ելոյ՝ վասն զն արդարու  
թիւն առաւել լազոյն է քան զայլ առաքինս Իս  
որպէս թափանցեալ ընդ այլն և զբարեկար  
գութիւն նոցա պահեալ , վասն այսոքիկ որ  
պէս կարևոր ինչ զնս միայն յիշեաց :

Էրրորդ առայսոքիւք՝ զարդարութիւն յիշե  
լով՝ զայլ առաքինութիւնս միանգամայն ա  
ւեալ եցոյց :

Քանզի մակըստացական առաքինութիւնն հան  
դերձ պատճառաւ՝ միմեանց հետուին : Քանզի  
որ պատճառաւ է ողջախոհ , այսինքն որ գլտէ

զպատճառն թէ վասնէրէ ողջախոճ • թէ վժ  
զի յանառակութենէ ժլատութիւնք և անիրաւ  
ճութիւնք լինին : Ա յնպիսին 'ի հարկէ և արե՛  
գոյ, զպատմն ստորադասելով :

Ա յնպիսին և խոհեմ գոյ • վասն զի գիտէ զպատ  
ճառն թէ վասնէր պարտէ լինիլ խոհեմ :

Ա յնպիսին և արդար գոյ • վասն զի 'ի մարմնա  
կանաց հեշտախտութեանց լինին անիրաւութիւնք •  
Իսկ մակըստացական առաքինութիւնք ասացան  
վասն բնականացն :

Իսկ բնականք տսին որք միանգամ ըստ խառ  
նունձոց մարմնոյ գոն • որք ոչ հետեւին միմեանց :

Քանզի որ ըստ խառնունձոց մարմնոյ է ողջա  
խոճ, ոչ ամիրօք և արի և խոհեմ և արդար գոյ :

Որք և ծառայականք կոչին և անբանք :

Ի՞նչ ծառայականք կոչին՝ որպէս 'ի հարկէ հետե  
ւեալք խառնունձոց մարմնոյն :

Քանզի որ 'ի ցորտ խառնունձոց է, նա 'ի հարկէ ողջախոճ  
գոյ : Իսկ անբանք կոչին վասն ոչ գիտելոյ զպատ  
ճառն թէ զի պարտէ ողջախոճ լինիլ :

Ի՞նչ դարձեալ անբանք կոչին վասն զի յանբան  
կենդանիսն բնանորեցաւ այսպիսի առաքինութե  
ութիւն տեսանիլ :

Որպէս յորժամ ասեմք զտաս  
րակ 'ի բնութենէ ողջախոճ, և զուղտ խոհեմ,

զառիւծ արի • և զարագիլ արդար, վասն զի  
զձեռացեալ հայրն կերակրէ :

Ի՞նչ դարձեալ մակըստացական առաքինութիւնք  
պայցան վասն բարոյականաց առաքինութեանց

որք յաւանդու թ ենէ և ՚ի պատու իրելոյ Գոն ։  
 Որպէս յորժամ որք ՚ի պատու իրելոյ Գոյ ողջա-  
 խոհ , ոչ գիտելով ըզ պատճառն ։ Որք ոչ հե-  
 տելին միմեանց ։  
 Ըստն զի մարթ Գոյ ող ջախոհ լինիլ յաւանդու  
 թ ենէ և ոչ իմաստուն ։

Ընդ այնոսիկ Հանդերձ և Ասաջկայ ։

Պրն ։ Ժ Ա ։



ետ պղատոնի և պիթագորի երկակի  
 սահմանելոյ զիմաստասիրութիւն , գոմն  
 յենթակայէ և գոմն ՚ի կատարմանէ ։  
 Գայ ստագիրացիին այսինքն արիստոտէլ և սահ-  
 մանէ զիմաստասիրութիւն ոչ փոքր ինչ խորհե-  
 լով . թէպէտ և մենատեսուկ զնա սահմանէ , նց  
 երկակի իւրաքանչիւրոցն զնա սահմանելոյ .  
 այլ մեծ և քարձրագոյն իմն խորհելով ։  
 Ըստն զի յառաւելութենէ զնա սահմանէ տ-  
 սելով , եթէ ՚իմաստասիրութիւնէ արհեստ  
 արհեստից և մակացութիւն մակացութեանց ։  
 Այլ պարտէ իրնդրել եթէ զննչ կամփջի  
 երկաքանչիւրոցդ վերակրկնակութիւն . ք  
 արհեստ արհեստից և մակացութիւն մակացութեց .  
 քանզի շատեր ասելն թէ իմաստասիրութիւնէ  
 արհեստ և մակացութիւն ։  
 Արդ ՚իսնդրելէ թէ վստնէր առադրեաց  
 ալ

արհեստից և մակացութեանց : Ի՞նչ պնդուի ան-  
սել թէ 'ի ձեռն սուաջին կրկնապատկութեան  
այսինքն արհեստ արհեստից' թագաւորի նմանեցոյց  
զիմաստասիրութիւնն :

Իսկ 'ի ձեռն երկրորդ կրկնապատկութեանն  
այսինքն մակացութիւն մակացութեանց' այ-  
նմանեցոյց զիմաստասիրութիւնն :

Քանզի յորժամ իշխանաց իշխան տսեմք, յայտ առ-  
նեմք զթագաւոր : Ըստ նմին օրինակի և արհեստ  
արհեստից յորժամ ստեմք' թագաւորի նմանեցու-  
ցանեմք զիմաստասիրութիւնն :

Իսկ յորժամ թագաւորաց թագաւոր տսեմք'  
զան յայտնեմք : Ըստ նմին օրինակի և մակա-  
ցութիւն մակացութեանց ստելով զիմաստա-  
սիրութիւնն' այնմանեցուցանեմք . քանզի լաւա-  
գոյն է մակացութիւն քան զարհեստ :

Վասնզի մակացութիւն տայ զսկզբմունս ար-  
հեստի : Նա քանզի և քերթ թօղն գիտէ թէ' էն  
և օն բնութեամբ երկարք են . այլ զգաւոր  
ճառանն ոչ գիտէ . այլ վերածգէ յերաժշտական  
իմաստասէրն :

Ի՞նչ որպէս յորժամ թագաւոր ոչ աղտեղացու-  
ցանէ զինքն որ ոչ անմիջակաբար խօսի ընդ  
ամբողսի, այլ կացուցանէ իշխանս ի վերայ .  
յորոյ ձեռն' վերջագունիցն խընամ' ածէ :

Ըստ նմին օրինակի և իմաստասիրութիւն յա-  
ռաջ ածէ զարհեստ, յորոյ ձեռն զենթակայօ  
նոցա գիտէ : Եւ դարձեալ որպէս անայինն  
անե

աներեւոյթ զօրութիւնս ոմանս ունի, յորոց  
 ձեռն աստեացս ինամածէ : Նոյնպէս և իմաստա  
 սիրութիւն յառաջ ածէ՝ զմակացութիւնս,  
 որպէս զի ձեռն սոցս գիտասցէ զենթակայս  
 նոցս :

Եւ դարձեալ՝ վասն այսորիկ սահմունէ զիմաս  
 տասիրութիւն արհեստ արհեստից և մակացութի  
 մակացութեանց . որպէս զի ցուցցէ եթէ զնոյն  
 բան ունին արհեստք և մակացութիւնք սու  
 իմաստասիրութիւն, զոր բան և նոյա ենթա  
 կայն առ նոսա : Քանզի բժշկականութիւն ենթա  
 կայ գոյ մարդկային մարմին . իսկ իմաստասիրու  
 թեան նոյն ինքն բժշկականութիւնէ ենթակայ :  
 Եւ դարձեալ՝ աստեղաբաշխութե ենթակայ  
 գոյ երկնային մարմին . իսկ իմաստասիրութե  
 նոյն ինքն աստեղաբաշխութիւննէ ենթակայ :  
 Եւ դարձեալ՝ վասն այսորիկ ասաց զիմաստա  
 սիրութիւն արհեստ արհեստից և մակացութի  
 մակացութեանց . վասն զի իմաստասիրութիւն  
 զբնութիւն էիցն գիտէ . իսկ զարտաբոյս բը  
 նութեանց և զհետևողս՝ ետ գիտէ արհեստից  
 և մակացութեանց :

Քանզի ինքն առնլալ զբոս գիտութե, զնիւթ  
 և զտեսակ և զսկզբմունս ամի՝ բացակատարէ  
 զչորս տարէրս . և ՚ի նոցանէ բացակատարէ  
 զնմանամանեայնս . և ՚ի նմանամանեայնս զգոր  
 ծիականն . և ՚ի գործիականացն ըզմարդկային  
 մարմինն :

Ի՞նչ զայլնն ամենայն պատահմունս որք 'ի մար-  
մնի՝ բժշկականութեան ետ գիտեւ. այսինքն  
զգաւս և զառողջութիւն :

Ի՞նչ որպէս թէ ինքն ոչ գիտելով, գիտէ և զայ  
նասիկ . այլ որպէս ոչ կամելով զծնքն աղտեղա-  
յո-ցանել մինչև 'ի հուսկ վերջնա հասանիլ :

Ի՞նչ դարձեալ իմաստասիրութի գիտէ զբնու-  
թիւնս ձայնի . իսկ զհետևողս ձայնի՝ ետ գի-  
տելքեր ժողնն . այսինքն զոլորակս և զհագագս :

Ի՞նչ դարձեալ իմաստասիրութիւն գիտէ զբնու-  
թիւնս գծի : Իսկ զայլն թոյլ ետ գիտեւ եր-  
կրոջսսիութեան :

Ի՞նչ դարձեալ վասն այսորիկ ասաց զիմաստասի-  
րութիւնն արհեստ արհեստից և մակացութիւն  
մակաց՝ . վասն զի նաև որ տայ ամենայն արհես-  
տից և մակացութեանց սկզբմունս :

Վասն զի քերականութիւնն 'ի նմանէ առնու-  
պէս և զօն բնութեամբ երկար գոյ . զորոյ  
զպատճառն իմաստասիրութիւնն գիտէ :

Իսկ նա խոստովանաբար առնելով յիմաստասի-  
րութենէ յարդարէ զիւր արհեստն :

Դարձեալ՝ բժշկականութիւնն գիտէ եթէ  
'ի չորից տարե ըց է մարդկային մարմին . ոչ գի-  
տելով զպատճառս թէ վասն թր են չորք տա-  
րե ըք . այլ խոստովանաբար առնելով յիմաս-  
տասիրութենէ յարդարէ զիւր արհեստն :

Ի՞նչ դարձեալ՝ ճարտասանութի պիտանանայ ար-  
դարոյ . այսինքն քաղաքականութեան անգիտանա-

լով զբնութիւն արդարոյն : այլ խոստովանա-  
բար յիմաստասիրութենէ առնելով յարդարէ  
գիւր արճեստն :

Արարորիկ անգխտանալով ճարտասանք զբնու-  
թիւն արդարոյն՝ ընտրեն զգզկէն առաւել  
քան թէ զզգկիւն : Իսկ իմաստասէրն որպէս  
գիտէ զբնութիւն արդարոյն՝ ոչ ընտրէ և ոչ  
զոք՝ ի գոյակ :

Իսկ եթէ գէտ լնիցի ընտրել ընտրէ ըզզէ-  
կիւն առաւել քան թէ զգզկէն : Քանզի և ա-  
սեն իսկ եթէ՝ ոչ որ կարէ զհոգին աւուրք վա-  
սել, այլ զիւրն վստէ սնիրաւս և անպատես  
գործելով . քանզի եթէ վստէ որզոք՝ կամ ըզ-  
մարմինն վստէ կամ զարտաբոյսն զենչն յափըշ  
տակելով . իսկ զհոգին ոչ կարէ վստել այլ ըզ-  
գործարան նորա այսինքն զմարմինն . որպէս և  
ասէին պիտագորակոնքն եթէ՝ եմ ես՝ և իմն  
և իմոյն :

Իսկ ասէին զհոգին . վստն զի՛ ի հոգւն ռնիմք  
զգոյութիւնն : Ի՞նչ իմ ասէին զմարմինն, որպէս  
զգործի հոգւոյ : Իսկ իմոյ ասէին զարտաբոյսն ?  
այսինքն զտալուածս :

Արդ որ վստէն՝ զիւրն վստէ . այլ զայլոյն ոչ  
կարէ : Ի՞նչ պնդուէ գիտել եթէ ոչ միայն բա-  
նական արճեստից և մակացութեանց տայ սկզբ-  
մունս իմաստասիրութիւն, այլ և անբանից .  
որպէս զլարն հիւսան, և զարբնութե՛ն զհարն .  
իսկ անբան արճեստք լին ք ոչ անպատճառք .

բանդի ոչինչ է արհեստ որ ոչ ունի պատճառ  
 թէպէտ և արճե ստաւորն անգիտանայ :

Ու անբանք կոչին՝ վասն զի կարող գոյ որ ու  
 սանին ոչ ինչ բարբառիլ և ուսանիլ : քանզի կա  
 րող գոյ հիւսն առանց բարբառելոյ աթոռ բա  
 ցակատարել :

Եւ դարձեալ պարտէ գիտել եթէ ոչ միայն  
 զսկզմունս կարող գոյ տալ իմաստասիրութիւն  
 ամենայն արհեստից և մակտոցութեանց, այլ և  
 վերջտինն ուղղել ըզսիտլեալն 'ի նոսա :

Քանզի քերթողք 'ի սահմանելն զձայն՝ վերա  
 ճորտի օգոյ ասացին • վերջտինն ուղղէ իմաս  
 տասէրն եթէ յուրէ սահմանդ • վասն զի ոչ  
 զուգադարձի • զի որ ինչ ձայն է՝ նա և վերաճո  
 րութիւն օգոյ • այլ ոչ որ ինչ վերաճորութի  
 օգոյ՝ այն ինչ և ձայն :

Ու ասն զի ասերբ որ եթէ զօդդ հարկունէ ոչ  
 բացակատարի ձայն : Իսկ կատարեալ սահմանք  
 այսոքիկ են որ զուգադարձին առ սահմանելսն •  
 որքոն, ինչ որ միանգամ կենդանի բանաւոր  
 մահկանացու մտաց և հանճարոյ ընդ ունակ, նա  
 մարդ :

Եւ որ միանգամ մարդ՝ կենդանի բանաւոր մահ  
 կանացու մտաց և հանճարոյ ընդ ունակ է : Ու ասն  
 որոյ սահմանէն զձայն այսպէս :

Ձայն է բացակատարութիւն գանչեցելոյ 'ի մեզ  
 հադադի, և երիւրեցելոյ ընդ խոշորութիւն  
 շնչափողին, և տեսակ արարեցելոյ լեզուաւ և  
 մա

մակալեզոճաճ : Դարձեալ պարտէ տսել՝ վասն  
այտորիկ ասաց զեմաստասիրու թիւն արճեստ  
արճեստից և մակացու ի մակացու թեց , վսճի Ծժ  
բանաճոր արճեստք պէտս ունին սահմանաց և  
բաժանմանց և ապացուցից , որոց մայր՝ իմաստա  
սիրու թիւնն ճանաչի :

Ընդ այնուի Հասերի և Աստուծոյ :

Պրակ 12 :



Ե՛ւ վասն զի ի վեր անդ զգոլոր սահմանն  
որպէս բոլոր ուսար , եկեացուք այտու  
ճետե 'ի մասունն նորս և քննե սցուք՝  
զփմի 'ի նոցանէ 'ի մէջ ածե լով : Վասն զի տսեն  
ուննք եթէ յոյժ տրեմարաբար զեմաստասիրու ի  
արճեստ արճեստից սասցիք գոյ . քանզի  
եթէ արճեստ արճեստից է՝ յայտէ թէ և ար  
ճեստէ :

Իսկ եթէ արճեստ է՝ յայտէ թէ և սխալական է  
որ է անպատեհ :

Առորս պարտէ տսել եթէ՝ ոչ ամենայն իրօք  
որք միանգամ միաբանք միաբանաբար ասին՝ նո  
քին և առանձնաբար ասին . քանզի ասն տսելք  
մեռեալ մարդ , և առանձնաբար ոչ կարեմք  
ասել եթէ մարդ է . վասն զի և ոչ ունի զյատ  
կու թիւնն մարդոյ . քանզի ոչ շնչուճորէ և ոչ

ԸԶ

գրայնիսն : Ի՛նչ դարձեալ ասիլ ասեմք քարէ  
նա՛ւ, և ո՛չ ասի նա՛ւ • վասն զի և ո՛չ վե բաբերի  
ի վե բայ ջուրց որպէս նա՛ւ : Ի՛նչ դարձեալ  
որպէս առասպել լին ասէ թէ մարդ և ո՛չ մարդ •  
բայց սակայն մարդ :

Չհաճս և ո՛չ զհաճս • բայց սակայն զհաճս •  
Ի վե բայ փայտի և ո՛չ փայտի • այլ փայտի :

Քարի՛ն և ո՛չ բարի՛ն • բայց քարի՛ն հարեալ  
սաստակեաց ըզ չղջեկանս ի վր կանչխոյ նստեալ :  
Արդ՝ որպէս յառաջագոյն ստացարք՝ ո՛չ սմեկայն  
իւրօք միաբանութեամբ ասացեալքս և առանձնա-  
բար ասին • որպէս և յընդդիմէն, ո՛չ ամեն լին  
առանձնաբար ասացեալքն և միաբանութեամբ  
ասիլ կարող գոն :

Արդ՝ ստորակայեսցի ոմն սիմոն արոճե տի՛ն  
կարոճակ • իսկ բարութեամբ բարի՛ն արոճե տի՛ն յոսի :

Արդ՝ ի վե բայ սորս առանձնաբար ասացեալքն  
ո՛չ կարող գոն և միաբանութեամբ ասիլ :

Արդոն, յորժամ ասեմք սիմոն կարոճակէ,  
սիմոն բարի է :

Արդ՝ զայստիկ զառանձնաբար ասացեալսս ո՛չ  
կարող գոյ միանգամայն յարե լարար ասել է թէ՛  
սիմոն կարոճակ բարի • վասն զի ըստ արոճե տի՛ն  
փգուն զնա ստորագրեցար :

Արդ այսպէս և ի վե բայ իմաստասիրութեան •  
քանզի արճեստ արճեստից զնա ասել մարթ  
գոյ • իսկ արճեստ միայն ասել ո՛չ գոյ մարթ •

Որպէս յառաջագոյն ցուցաք եթէ ոչ կարող  
գոն միաբանաբար ստացելովքն և առանձնաբար  
ասիլ : Բայց սակայն եթէ և արհեստ ասեմք  
զմաստասիրութիւն գոլ՝ ոչ ինչ անտեղի է .  
քանզի բազում անգամ զանուն արհեստիդ և  
իվերայ մակայութեան առնուի . քանզի և պրա-  
տոն ՚ի գորգեայ տրամաբանութեանն ըզ մակա-  
ցութիւն արհեստ կոչէր :

Քանզի առնան ստէ թէ ո՛րոյ ըզ քեզ սես-  
ցուք արհեստի մակայու . այսինքն մակայուէ :  
Քանզի մակայու՝ մակայութեանէ մակայու :  
Այլ և ՚ի ստիեւտեայ տրամաբանութեանն զա-  
րարիչն արճեստաւոր կոչեաց զանսխալաբար  
գիտողն ամենայնի :

Ի՞նչ դարձեալ՝ եթէ արդարև այս սահմանն որ  
ստէ զմաստասիրութիւն արհեստ արհեստից՝  
յառաճելութեանէ : Իսկ առաճելութիւնն այլէ  
այնմ առ որ զառաճելութիւնն ունի . ապա  
և իմաստասիրութիւնն ոչէ արհեստ , այլ առա-  
ճել քան զարհեստ : Արդ՝ այսոքիկ այսպէս :  
Դարձեալ ասեն ոմանք եթէ , զնորդ ստէք  
զմաստասիրութի մակայուի մակայուեց . մի թէ  
այլ մակայուի է՞ աճելի քան զմաստասիրութի :  
Առ որս պարտէ ասել եթէ երկակի՛ է մակա-  
ցութի . մին նե բառորադրական՝ և մին անտո-  
րադրական :

Ի՞նչ նե բառորադրականէ որ առնու զսկզբունս  
որք պէտս ունին ապայուցութեան . և որոց

զպատճառսն անգիտանայ : Որպէս յորժամ երկրաչափն առնու խոստովանաբար ե թ է նշանն է անմասն ինչ, զորոյ զպատճառն ոչ գիտէ • այլ այն՝ բնական իմաստասիրին է :

Իսկ անստորադրական մակացու թ իւն է՝ որ առնու սկզբունս զհասարակայ մտածութիւնս որ ոչ ունին պէտս ապացուցութեան :

Որպէս յորժամ ասեմք թ է՝ Թժ բարի է • որ է հասարակ մտածութիւն • վասն զի ամենայն ոք խոստովանի թ է Թժ բարի է • և ոչ ինչ ապացուցութե ունի պէտս : Արդ՝ այսոքիկ այսէս • Ի՞նչ վասն զի յիշուին արարաբ արհեստի և մակացութեան, և վասն սոցա սասայութե գուզնաբեայ ինչ :

Ի՞նչ նախ քան զսոցայն՝ յողագս գիտութեան սասայութե :

Արդ՝ պարտէ գիտել ե թ է՝ գիտութիւն կամ ընդհանուր է կամ մտանական • կամ հանդերձ պատճառաւ կամ առանց պատճառի • յոյոց լինին չորքս այսոքիկ : Հմտութիւն, Ներհմտութիւն, Արհեստ, Մակացութիւն :

Արդ՝ հմտութիւն է միոյ իրի անպատճառ գիտութիւն • որպէս յորժամ մի դեղ գիտելով այնմ միայն պիտանանայ • ոչ գիտելով զպատճառն ե թ է որպէս պարտէ պիտանանալ նմա : Իսկ նե ըհմտութիւն է ընդհանուր անպատճառ գիտութիւն • որպէս այնք որք ՚ի նե ըհմտականաց բժշկայն են, որք բաղում գեղս գիտելով  
անս

անգիտանան զպատճառս դեղոցն : Ի՞նչ դարձեալ ներհմուտ թիւն է յիշումն և անբան պահպանու թիւն մարդկային բազմաբար և նոյնաբար երևեցելոյ :

Քանզի ներհմուտական բժիշկն յիշելով և պահելով բազում անդամ և զնոյնաբար երևեալն 'ի դեղոցն' պիտանանայ նոցին :

Իսկ արհեստէ ընդհանուր գիտութիւն հանդերձ պատճառաւ : Կամ արուեստէ ունակութիւն ճանապարհորդեալ հանդերձ երևակայութեամբ : Քանզի արբեստ ունակութիւնն է և գիտութիւն . այլ և ճանապարհորդէ այսինքն զամենայն ըստ կարգին առնէ :

Իսկ հանդերձ երևակայութեամբ ստացու վասն բնութեան . վասնզի և բնութիւն ունակութիւնէ քանզի ունի զգոլն յայնոսիկ որք ունի զնա . այսինքն 'ի մարդում և 'ի քարում և յայլն . և ըստ կարգի յառաջագայի , բայց ոչ ըստ երևակայութեան որպէս արհեստ :

Քանզի արուեստաւորն պիտանանալով քանի յորժամ կտնի ինչ առնել այսինքն պատճառին՝ նախ և առաջին տրպաւորէ յինքեան և այնպէս բացակատարէ :

Իսկ բնութիւնն ոչ երբէք յառաջագոյն տրպաւորէ յինքեան : Ի՞նչ դարձեալ արուեստէ բողկացու թիւն 'ի հասողութենէ' ներհմուտութեամբ նախակրթեալ՝ սու 'ի պիտանացու ինչ կատարումն որ 'ի կենցաղումս :

Իսկ

Իսկ հաճատու թիւն սահմանիդ այս է :  
 Լըճեստ է բաղկացու թիւն , այսինքն գումա-  
 թու թիւն յարտադրու թե՛նէ : Քանզի ոմանց  
 զայս ինչ գիտե լոց և ոմանց զայն ինչ՝ բացակա-  
 տարեցա՛ւ արճեստ :

Կե ըմտու թեամբ նախակրթեալ , այսինքն  
 փորձեալ բազում հըմտու թեամբ :

Քանզի բազում հմտու թեամբ փորձեալ  
 զտեսակս արճեստին՝ այնպէս ձօնէին զնոսա  
 նորին արճեստի :

Իսկ առ ինչ պիտանի կատարումն որ ՚ի կենցա-  
 ղումս ստացա՛ւ , վասն ընդունայն արուեստու-  
 թեանց և չար արուեստու թեանց որք ոչ ու-  
 նին պիտանի կատարումն ՚ի կենցաղումս :

Ե՛ւ ընդունայն արճեստու թիւնէ լարախողա-  
 ցու թիւն , ձողախաղացու թիւն • որ ոչ օգտե-  
 ցուցանէ զկենցաղս և ոչ վնասէ :

Իսկ չար արուեստու թիւնէ կախարդու թի ,  
 դիւ թու թիւն • որ ոչ միայն ոչ օգտեցուցանեն  
 զկենցաղս , այլ և վնասէն ևս : Իսկ մակացու-  
 թիւնէ ընդհանուր անսխալ և անխորհրտե լն  
 գիտու թիւն • քանզի անսխալաբար գիտե  
 զգիտե լնն :

Ե՛ւ գարձեալ՝ մակացու թիւնէ գիտու թիւն  
 անսխալ իւրոյ են թակային իրողու թեանց՝ ըստ  
 որում՝ ունին զբու թիւն իրողու թեանց • քան-  
 զի որպէս ունին զբնու թիւն իրողու թեանց են  
 թակայ իրք՝ այնպէս գիտե :

Արդ՝ այսոքիկ այսպէս :  
 Բայց տարակուսին ոմանք ասելով եթէ՛ մինչ  
 արհեստ հանդերձ պատճառաւ գիտէ՛ և մակա  
 ցուծիւն հանդերձ պատճառաւ, ըստ որհւմ  
 իրաց զոնազանին ՚ի միմեանց :

Է՞ր ասեն ոմանք եթէ՛ վասն զի մակացուծիւն  
 անսխալաբար գիտէ և անսխալ է • իսկ արհեստ  
 սխալէ : Առորս ասելք եթէ՛ ոչ բարւոք աս  
 տէք • քունլի և արուճեստ ըստ իւրում բանին  
 անսխալ է • իսկ վասն ենթակային անպատկա  
 նութեան թո՛ւի սխալ գոյ : Արդ՝ զանազանին  
 ՚ի միմեանց արհեստ և մակացուծիւն • վասն զի  
 մակացուծիւն և ենթակայն անսխալք են •  
 որպէս երկիր և երկրաչափութիւն • աստեղա  
 գիտութիւն և աստեղք :

Քանզի և աստեղագիտութիւն անսխալէ, և  
 ենթակայ նորին այսինքն աստեղք : իսկ ար  
 հեստ ըստ իւրում բանին անսխալ է • իսկ ըստ  
 ենթակային վասն զի հոսանուտ է թո՛ւի սրխա  
 լական գոյ • որպէս հիւսնութիւն՝ և փայտնո  
 թին ենթակայ :

Արդ՝ հիւսնութիւն ըստ իւրում բանին ան  
 սխալ է • իսկ փայտն վասն զի ապականացու է և  
 հոսանուտ՝ յառնել հիւսան աթոռ և կամ այլ  
 ինչ՝ յանկարծօրէն բեկանի՝ և սխալեցուցանէ  
 վարուճեստն :

Արդ՝ որպէս յառաջագոյն ստացաք՝ այսոքիւք  
 զանազանին ՚ի միմեանց արուճեստ և մակացու

Թիւն • վասն զի մակաօրութիւն և ըստ իւրում  
բանին անսխալ է և ըստ ենթակային :  
Իսկ արհեստ ըստ իւրում բանին անսխալ է ,  
իսկ ըստ ենթակային թո՛ւրի սխալական գող :

Ընդ այսպիսի Հոնդէրձ և Կոստանտին :

Պրակ 13 :



կիզբն և կատարումն մեզ եղեցի պիթա  
գորաս • քանզի սիրելի իսկ երե՛՛հի այս  
պիտում առն զսկիզբն և զկատարումն 'ի նսն ան  
գեւորպէս 'ի բոլորում • քանզի 'ի բոլորումն  
շարակցեալ գոյ սկիզբն և կատարումն :

Արդ այսպէս սասկիզբն և կատարումն եղև մեզ :  
Ի՞նչ սկիզբն վասն զի նորա են սահմանքն որ 'ի  
սկզբանն ասացան • այսինքն թէ իմաստասիրութիւն է  
ծանօթութիւն էակացն ըստ որում  
էակք են : Ի՞նչ դարձեալ իմաստասիրութի է  
գիտութիւն Թոմասնց և մարդկայնց իրողութեանց :  
Իսկ կատարումն վասն զի նորին առն  
սահման բացատրեցան 'ի կատարմանս որ ասէ  
թէ իմաստասիրութիւն է սիրելութիւն իմաստ  
տութեան :

Ի՞նչ պարտ է գիտել թէ ոմանք պատարակէն  
զբացատրութիւն սահմանիս ասելով թէ Թոմաս  
սահման զուգադարձի յիւր սահմանելն •  
իսկ առաջիկայ սահմանս ոչ զուգադարձի :

Քանզի

Քանզի որ ինչ իմաստասիրութիւն է՝ սիրելու  
 թիւն իմաստութեան է • այլ ոչ որ ինչ սիրելու  
 թիւն իմաստութե՛ն ան և իմաստասիրութե  
 Քանզի ամենայն արհեստ սիրէ և տենչայ իւր  
 ում ենթակային • վասն որոյ պարտէ ստել թէ  
 բարձր է առաջիկայ սահմանդ • քանզի պի  
 թագորն է :

Վասն զի նախ և առաջին պիթագորաս զմաս  
 տասիրութեան սահման եգիտ, որ վայրապար  
 բերիւր և իվերայ ձեռնականաց արհեստից որ  
 պէս և բերթօն յայտ առնէ :

Վասն զի իմաստունն ստէ յարմարեաց զանօթն •  
 իմաստունն անոճանեաց զհիւնն : Իսկ պիթա  
 գորաս զմաստունն ՚ի բաց որոշեալ ՚իվերայ  
 գիտութեան ճշմարիտ գոյին ետ • քանզի զնս  
 առաջին անոճանեաց իմաստութիւն զգիտու

թիւն ճշմարիտ գոյին այսինքն այ :

**Ե**ւ պարտէ գիտել թէ՛ իմաստասիրութի  
 բազում ատիճանաց պիտանանայ • քանզի և  
 բազում ատիճանք են իմաստասիրութեան •  
 քանզի պարտէ գիտել զհինգ գիտնական զօրու  
 թիւնն : Չգգայութիւն, զերեւակայութիւն,  
 զկարծիս, զորամատուցութիւն, զմիտս :

Եւ զգայութիւն է առաջիկայ իրի մասնական  
 գիտութիւն • վասն զի ամենայն զգայութիւն  
 զմասնական գիտութիւն գիտէ :

Իսկ երեւակայութիւն է բացակայիցն մասնական  
 գիտութիւն :

Ի՞նչ զանազանի երևակայութիւն 'ի սոսկմտածութեանէ յայտուիկ, վասն զի երևակայութիւն որպէս ասացաք բացակայիցն է յիշողութիւն օրակ սոսկմտածութիւնէ ոչ գոյիցն տրամատպաւորութիւն :

Որպէս յորժամ որ զեղջրոճաբաղն ստեղծանիցէ յիւրում մտածութեանն որ ոչէ գոյ : Իսկ կարծիք երկակի ասին : Է որ պատճառաւ և է որ ասանց պատճառի :

Ի՞նչ ասանց պատճառի՝ որպէս յորժամ որ զբնական հոգին կարծիցէ անմահ, ոչ գիտելով զպատճառն : Ի՞նչ պատճառաւ՝ յորժամ և զպատճառն գիտիցէ զանմահութեանն :

Ի՞նչ պարտէ գիտել, զի կարծիք հանդերձ պատճառաւ՝ եզրակացութիւն է առաջարկութե օրգոն, հոգին ինքնաշարժ . ինքնաշարժն մշտաշարժ օ մշտաշարժն անմահ է . ահա եզրակացութիւն առաջարկութեանց օ այսինքն հոգի անմահ օ որ կոչեցաւ կարծիք հանդերձ պատճառաւ : Իսկ տրամախոհութիւնէ ընդհանրականացն հանդերձ պատճառաւ գիտութիւն օ լասնորոյ և տարակուսին ոմանք ստելով թէ՞ յորժամ հանդերձ պատճառաւ կարծիք գիտութիւնէ ընդհանրական, և տրամախոհութե հանդերձ պատճառաւ գիտութե ընդհանուր, զի ոչ զանազանիս 'ի միմեանց :

Առորս պարտէ ասել եթէ՝ կարծիք հանդերձ պատճառաւ՝ եզրակացութիւն առաջարկութե

կու թեանց է : Իսկ տրամախոհու թիւն գիտող  
առաջարկու թեանց 'ի հասարակ խոստովանու  
թեանց է • և հիւսող և եզրացուցիչ :

Արդ՝ այսօրիկ այսպէս ելոց՝ պարտէ գիտել  
եթէ 'ի զգայութեանց ծնանի հմտութիւն,  
և յառանց պատճառի կարծեաց ներհմտութիւն •  
այլ և 'ի զգայութենէ և յերևակայութենէ ծը  
նանի ներհմտութիւն :

Իսկ 'ի տրամախոհութենէ և՛ 'ի հանդերձ պատ  
ճառաւ կարծեաց ծընանի արհեստ : Իսկ 'ի  
տրամախոհութենէ և՛ 'ի մտաց՝ մակացութիւն :  
Քանզի յորժամ առնու սկզբմունս որ պէտս  
ունի ապացուցութեան, այն ինչ 'ի տրամախո  
հութենէ ծնանի մակացութիւն :

Իսկ յորժամ առնու սկզբմունս որք ոչ պիտոյա  
նան ապացուցութեան, այն ինչ մտաց ասեմք  
ծնանիլ զմակացութիւն :

Ի՞նչ արդ՝ անա որպէս ասացաք քաղում աստիճա  
նօք ցուցաւ իմաստասիրութիւն պիտանացեալ :  
Ի՞նչ է թէ՛ լաճագոյն ամենայն արհեստից և մա  
կացութեանց է իմաստասիրութիւն :

Որպէս պիտոն առ ոմն թէ ոգորոս երկրաչափ  
յայտ տունէ ասելով է թէ, այսպիսի ինչ ով  
թէ ոգորէ ոչ եկն երբեք առ մարդիկ, և ոչ  
